ՌՈԲԵՐՏ ՂԱԶԱՐՅԱՆ
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի հայցորդ

ԿԱՏԱՐՈՂԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐ

Հոդվածում քննության են առնվում հարկադիր կատարման սկզբունքների էության բացահայտման հետ կապված տեսական և գործնական մեկնաբանությունները: Մասնավորապես, քննարկման առարկա են դարձվել միջազգային և ազգային սկզբունքները: Բացահայտվել է դրանց տեղը և նշանակությունը իրավական համակարգի մեջ:

Հիմնաբառեր *- Դատական ակտերի հարկադիր կատարում, կատարողական վարույթ, կատարողական իրավունքի սկզբունք, կատարողական իրավունքի միջազգային սկզբունքներ, կատարողական իրավունքի ազգային սկզբունքներ, կատարողական իրավունքի սկզբունքների համակարգ:*

Ինչպես արդեն նշել ենք, խախտված սուբյեկտիվ իրավունքների պաշտպանությունն իրականացվում է դատական ակտի, ինչպես նաև՝ այդ դատական ակտի իրագործման միջոցով: Ընդ որում, դատական ակտի իրագործման, դրա հարկադիր կատարման գործընթացը գտնվում է կատարողական վարույթի սկզբունքների կանոնակարգման տիրույթում:

Գրականության մեջ կատարողական վարույթի սկզբունքները տարանջատվում են՝ տարբեր չափանիշներից ելնելով: Հիմնական չափանիշը, որով տարանջատվում են կատարողական վարույթի սկզբունքները, այն իրավական ակտերի տեսակներն են, որոնցում դրանք ամրագրված են[1]: Հատուկ նշանակություն ունի ազգային և միջազգային չափանիշներով սկզբունքների տարանջատումը, քանի որ միջազգային իրավական ակտերում ամրագրված նորմերը կանխորոշում են ազգային իրավական ակտերի բովանդակությունը[2]: Թեպետ, մյուս կողմից՝ միջազգային սկզբունքներն էլ իրենց հերթին ձևավորվում են ազգային անհատական պահանջներից ելնելով: Այդ իսկ պատճառով էլ մեր կարծիքով, միջազգային և ազգային սկզբունքները գտնվում են փոխգործակցության մեջ և իրենց զարգացման ընթացքում միմյանց նկատմամբ ունենում են փոխազդեցություն:

Կատարողական իրավունքի միջազգային սկզբունքներ: Եվրոպական կոնվենցիայի[3] 6-րդ հոդվածով ամրագրվում է, որ. «Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները կամ նրան ներկայացված ցանկացած քրեական մեղադրանքի առնչությամբ, ունի օրենքի հիման վրա ստեղծված անկախ ու անաչառ դատարանի կողմից ողջամիտ ժամկետում արդարացի և հրապարակային դատաքննության իրավունք»: Սույն իրավունքը մեկնաբանվում է նաև այն տեսանկյունից, որ կոնվենցիայով ամրագրված իրավունքի խախտում կարձանագրվի նաև այն դեպքում, երբ ուշացվում է, չի կատարվում դատարանի համապատասխան որոշման կատարումը[4]:

Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածի առաջին մասը կատարողական վարույթի պարտատիրոջ համար նախադրյալներ է ստեղծում ողջամիտ ժամկետում արդյունավետ միջոցներով իրականացնելու դատական ակտերի հարկադիր կատարումը: Դատական ակտերի հարկադիր կատարումն արդյունավետ իրականացնելու գործընթացը բազմաշերտ է, որն իր մեջ ներառում է հարկադիր կատարողի պատրաստվածության աստիճանը և հատուկ իրավական կարգավիճակը, հարկադիր կատարողի գործողությունների նկատմամբ հսկողությունը, հարկադիր կատարողի գործողությունների ժամկետները, հարկադիր կատարման միջոցները, դրանց ճիշտ ընտրությունը և այլն[5]:

Ըստ էության, վերը նշված արդյունավետ միջոցներով դատական ակտերի հարկադիր կատարման նախադրյալներով պայմանավորված էլ՝ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով[6] սահմանվում են կատարողական գործողությունների ժամկետները, հարկադիր կատարման միջոցները, դրանց կիրառման կարգը և այլն: Այլ կերպ՝ նշվածը հիմնավորում է այն, որ կատարողական վարույթի միջազգային սկզբունքները, որոնք բխում են Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածից և այլ իրավական նորմերից, կանխորոշում են կատարողական վարույթը կանոնակարգող ներպետական օրենսդրության բովանդակությունը և դրանց ճիշտ մեկնաբանությունը:

Բացի Եվրոպական կոնվենցիայի 6-րդ հոդվածում ամրագրված նորմից՝ կատարողական վարույթի համար սկզբունքային նշանակություն ունեն նաև այլ իրավական նորմեր: Այսպես՝ Եվրոպական կոնվենցիայի 8-րդ հոդվածով ամրագրվում է.

«1. Յուրաքանչյուր ոք ունի իր անձնական ու ընտանեկան կյանքի, բնակարանի և նամակագրության նկատմամբ հարգանքի իրավունք:

2. Չի թույլատրվում պետական մարմինների միջամտությունն այդ իրավունքի իրականացմանը, բացառությամբ այն դեպքերի, երբ դա նախատեսված է օրենքով և անհրաժեշտ է ժողովրդավարական հասարակությունում՝ ի շահ պետական անվ-

տանգության, հասարակական կարգի կամ երկրի տնտեսական բարեկեցության, ինչպես նաև անկարգությունների կամ հանցագործությունների կանխման, առողջության կամ բարոյականության պաշտպանության կամ այլ անձանց իրավունքների և ազատությունների պաշտպանության նպատակով»:

Այս հոդվածից, ըստ էության, բխում է համաչափության կանոնը, ըստ որի՝ հարկադիր կատարողի գործողությունները պետք է համաչափ լինեն պարտապանի ստանձնած պարտավորություններին: Այսպես, օրինակ, «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքի 43-րդ հոդվածում սահմանվում է, որ պարտապանի գույքի վրա բռնագանձումը տարածվում է այն չափով, որն անհրաժեշտ է կատարողական թերթի պահանջների կատարման համար, ներառյալ՝ կատարման ծախսերը: Կամ նույն օրենքի 46-րդ հոդվածում ամրագրվում է, որ պարտապանի մոտ դրամական միջոցների առկայության դեպքում պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը պարտավոր է պարտապանի դրամական միջոցների վրա արգելանք դնել միայն այն չափով, որը նշված է հարկադիր կատարողի որոշման մեջ: Ընդ որում, նշված պահանջների չպահպանման դեպքում, պարտապանի հաշիվները սպասարկող բանկը կամ այլ վարկային կազմակերպությունը ավել պահած գումարի համար պարտավոր է յուրաքանչյուր օրվա համար վճարել տույժ՝ նշված գումարի 0.1 տոկոսի չափով:

Ըստ էության, համաչափության սկզբունքը կատարողական վարույթի մասնակիցների իրավունքների և պարտականությունների հավասարակշռումն ապահովող միջոց է, որը նպաստում է ողջամիտ սահմանափակումների կիրառմանը պարտապանի նկատմամբ:

Բացի վերը նշված սկզբունքներից, որպես կատարողական վարույթի միջազգային սկզբունք՝ ամրագրվում են նաև անկողմնակալության, անկախության, օրինականության, իրավունքի գերակայության, պարտապանի գույքի իմունիտետի, բարեխղճության, համաչափության, պարտապանի գույքի վերաբերյալ տվյալների հավաքագրման արագության և արդյունավետության, թափանցիկության, հարկադիր կատարողների մասնագիտական պատրաստվածության, հարկադիր կատարողների նկատմամբ վերահսկողության սկզբունքները[7]:

Կատարողական իրավունքի ազգային սկզբունքներ: Կատարողական իրավունքի ազգային սկզբունքները գրականության մեջ բաժանվում են հետևյալ խմբերի[8].

1. Ընդհանուր իրավական սկզբունքներ[9] (օրինականության, արդարության, իրավահավասարության, սոցիալական ազատության, սոցիալական պարտավորության, օբյեկտիվ ճշմարտության, ըստ մեղքի պատասխանատվության, իրավաբանական օգնություն ստանալու սկզբունքներ),

2. Միջճյուղային սկզբունքներ (ազգային լեզվի, դիսպոզիտիվության, հրապարակայնության, կատարման օպերատիվության և հարկադիր կատարման մատչելիության սկզբունքներ),

3. Ճյուղային սկզբունքներ, որոնք բնորոշ են միայն կատարողական իրավունքին (հարկադիր կատարման իրականացումը ճյուղային և տարածքային մեթոդների համադրությամբ, դատական ակտերի կամավոր կատարման սկզբունք, դատարանի և այլ մարմինների մասնակցությունը իրենց կողմից կայացված ակտերի հարկադիր կատարման գործընթացին, պահանջների ամբողջական և արդարացի բավարարում, կատարողական մարմինների նախաձեռնողական բնույթ, պարտապանի անձի, ինչպես նաև՝ նրա գոյության նվազագույն կենսական միջոցների անձեռնմխելիության, կատարողական գործողությունների արագության սկզբունք):

Դ.Խ. Վալեևը կատարողական իրավունքի ազգային սկզբունքները բաժանում է երկու խմբի.

1. Ընդհանուր իրավական սկզբունքներ,

2. Սպեցիֆիկ սկզբունքներ, որի մեջ ներառվում են լեզվի, դիսպոզիտիվության, պարտապանի անձի, ինչպես նաև՝ նրա գոյության նվազագույն կենսական միջոցների անձեռնմխելիության սկզբունքները և բռնագանձվող գումարի համաչափ բաշխումը պարտատերերի միջև[10]:

Կատարողական իրավունքի ազգային սկզբունքների կապակցությամբ յուրահատուկ մոտեցում է ցուցաբերվում Վ. Ֆ. Կուզնեցովի կողմից: Նա առաջարկում է կատարողական իրավունքի՝ որպես նոր ձևավորվող առանձին իրավունքի ճյուղի սկզբունք դիտարկել նրանք, որոնք բնորոշում են կատարողական վարույթի առանձնահատկությունը: Վերջինիս կողմից նմանատիպ սկզբունք են դիտարկվում դատական և օրենքով նախատեսված այլ ակտերի հարկադիր կատարումը, կատարողական մարմինների նախաձեռնող լինելը, պարտապանի գույքի վրա առանց պայմանականության բռնագանձում տարածելը, առանց պայմանականությունների կատարողական վարույթ հարուցելը միայն կատարողական մարմինների կողմից, պարտատիրոջ, պարտապանի և այլ անձանց իրավունքների պաշտպանությունը կատարողական գործողություններ իրականացնելիս, օրենքով սահմանված ժամկետներում կատարողական գործողություններն իրականացնելը, պարտատիրոջ պահանջներն առաջնային բավարարելը[11]:

Կատարողական իրավունքի ազգային սկզբունքներն ամրագրված են մի շարք երկրների օրենսդրությամբ: Այսպես, օրինակ՝ «Կատարողական վարույթի մասին» Ռուսաստանի Դաշնության

օրենքի 4-րդ հոդվածով[12], «Կատարողական վարույթի և դատական կատարածուների իրավական կարգավիճակի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածով[13], «Կատարողական վարույթի և դատական կատարածուների իրավական կարգավիճակի մասին» Ղրղզստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածով[14], «Կատարողական վարույթի մասին» Բելառուսի Հանրապետության օրենքի 5-րդ հոդվածով[15], Ուկրաինայի «Կատարողական վարույթի մասին» օրենքի 2-րդ հոդվածով[16] սահմանվում են կատարողական վարույթի հիմնական սկզբունքները: Կարծում ենք, այս մոտեցումը արդարացված է այն տեսանկյունից, որ կատարողական վարույթի ընթացքում դրա մասնակիցները կարողանում են իրենց վարքագիծը դրսևորել օրենքի ոգուն համահունչ: Այդ մասով կարծում ենք, որ թերություն է, երբ «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքում առանձին հոդվածով չեն սահմանվում կատարողական վարույթի սկզբունքներ: Հատկանշական է, որ հետխորհրդային պետություններից քչերն են (Հայաստան, Ադրբեջան[17]), որ առանձին հոդվածով չեն սահմանում կատարողական վարույթի սկզբունքները:

Այսպիսով, ելնելով վերոգրյալից, առաջարկում ենք «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով սահմանել կատարողական վարույթի սկզբունքները: Մասնավորապես, այդպիսի սկզբունքներ կարող են լինել դատական ակտերի կամավոր կատարման սկզբունքը, դատարանի և այլ մարմինների մասնակցությունը իրենց կողմից կայացված ակտերի հարկադիր կատարման գործընթացին, պահանջների ամբողջական և արդարացի բավարարումը, կատարողական մարմինների նախաձեռնողական բնույթը, պարտապանի անձի, ինչպես նաև՝ նրա գոյության նվազագույն կենսական միջոցների անձեռնմխելիության, կատարողական գործողությունների արագության սկզբունքը:

---

[1] Տե՛ս, Делтчев А.А. Принципы исполнительного права по Проекту Исполнительного кодекса РФ // Исполнительное право. 2005. N1. С. 15, Панкратова Н.А. К вопросу о принципах исполнительного права //. Система гражданской юрисдикции в канун XXI века: современное состояние и перспективы развития. Межвуз. Сборник научных Трудов. Екатеринбург, 2000. С. 504. Улетова Г.Д. К вопросу о системе принципов исполнительного права // Проблемы защиты прав и законных интересов граждан и организаций: Материалы Международной научно-практической конференции. Краснодар-Сочи, 23 мая 2002г. Краснодар: Кубанский государственный ун-т, 2002. С. 67.

[2] Տե՛ս, Арбитражный процесс: Учебник // Отв. ред. проф. В.В. Ярков. 3-е изд., перераб. и доп. М.: Волтерс Клувер, 2006. С. 55.

[3] «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (1950թ. նոյեմբերի 4, ՀՀՊՏ 2002.06.05/17 (192) հոդ.367):

[4] Տե՛ս, Եվրոպական դատարանի Hornsby v Greece գործով 1997թ. մարտի 19-ին կայացված վճռի 40-րդ կետը, Malinovskiy v Russia գործով 2005թ. հուլիսի 7-ին կայացված վճռի 34-րդ կետը և այլ գործերով կայացրած որոշումներ:

[5] Տե՛ս, Малошин К.А. Принципы гражданского исполнительного права: теоретические проблемы понятия и системы. Диссертация на соискание ученой степени кандидата юридических наук. Екатеринбург, 2010. С. 103.

[6] Ընդունվել է 1998թ. մայիսի 5-ին: Տե՛ս ՀՀՊՏ 1998.06.15/12(45):

[7] Տե՛ս, Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2003թ. սեպտեմբերի 9-ին 851-րդ նստաշրջանում հարկադիր կատարման վերաբերյալ ընդունված N 17 որոշում:

[8] Տե՛ս, Юков М. К. Теоретические проблемы системы гражданского процессуального права, дис. ... д.ю.н. Свердловск, 1982, С. 176-186, Исаенкова О.В. Исполнительное право в Российской Федерации: особенности становления и перспективы развития / под ред. д.ю.н., проф. А.А. Демичева. М.: Юрлитинформ, 2007, 117-158 էջեր, Грицай О.В. Принципы современного исполнительного производства. Арбитражный и гражданский процесс, 2002. N6, С. 35-43, Горбунова Я.П. Исполнительное производство как институт административного права: проблемы организации, практической реализации и перспективы правового регулирования: Автореф. дис. ...к.ю.н. Воронеж, 2007, С. 97-112. Обращение взыскания на имущество коммерческих организаций. Учебно-практический курс. СПб: Издательский дом СПбГУ, издательство юридического факультета СПбГУ, 2006, С. 46-55.

[9] Ն.Ա. Պանկրատովան ընդհանուր իրավական սկզբունքներն անվանում է Սահմանադրության մեջ ամրագրված սկզբունքներ, որոնք իրենց բովանդակությամբ՝ ըստ էության նույնանում են: Տե՛ս, Панкратова Н.А. ва // Система гражданской юрисдикции в канун XXI века: современное состояние и перспективы развития. Межвуз. сборник научных трудов. Екатеринбург, 2000, С. 504-505.

www.journal.lawinstitute.am

[10] Տե՛ս, Валеев Д.Х. Исполнительное производство: Учебник для вузов. СПб: Питер, 2008, С. 65.
[11] Տե՛ս, Кузнецов В.Ф. Система исполнительного производства: Монография / Челяб. гос. ун-т. Челябинск, 2001, С.36-44.
[12] Տե՛ս, http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_71450/b2d880ccd1b005070fe931138483a92020 bc8484/: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ:
[13] Տե՛ս, https://online.zakon.kz/Document/?doc_id=30617206#pos=0;0: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ:
[14] Տե՛ս, http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/994: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ:
[15] Տե՛ս, http://kodeksy-by.com/zakon_rb_ob_ispolnitel_nom_proizvodstve.htm: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ:
[16] Տե՛ս, http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=86789: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ:
[17] Տե՛ս, http://azertag.az/ru/xeber/ZAKON_AZERBAIDZHANSKOI_RESPUBLIKI_Ob_ispolnenii_sudebnyh_ reshenii-882547: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

Ա) Իրավական ակտեր

1. ՀՀ Սահմանադրություն (փոփոխություններով) (ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում Հոդ. 118)
2. «Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենք (1998թ. մայիսի 5-ին: ՀՀՊՏ 1998.06.15/12(45):
3. Եվրոպայի խորհրդի նախարարների կոմիտեի կողմից 2003թ. սեպտեմբերի 9-ին 851-րդ նստաշրջանում հարկադիր կատարման վերաբերյալ ընդունված N 17 որոշում:
4. «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիա (1950թ. նոյեմբերի 4, ՀՀՊՏ 2002.06.05/17 (192) Հոդ.367):
5. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Հորնսբին ընդդեմ Հունաստանի գործով 1997թ. մարտի 19-ի վճիռ:
6. Մարդու իրավունքների եվրոպական դատարանի Մալինովսկին ընդդեմ Ռուսաստանի գործով 2005թ. հուլիսի 7-ին կայացված վճիռ:
7. «Կատարողական վարույթի մասին» Ռուսաստանի Դաշնության օրենք (http://www.consultant.ru/document/cons_doc_LAW_71450/b2d880ccd1b005070fe931138483a92020 bc8484/: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ)
8. «Կատարողական վարույթի և դատական կատարածուների իրավական կարգավիճակի մասին» Ղազախստանի Հանրապետության օրենք (https://online.zakon.kz/Document/?doc_id=30617206#pos=0;0: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ)
9. «Կատարողական վարույթի և դատական կատարածուների իրավական կարգավիճակի մասին» Կիրգիզստանի Հանրապետության օրենք (http://cbd.minjust.gov.kg/act/view/ru-ru/994: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ)
10. «Կատարողական վարույթի մասին» Բելոռուսի Հանրապետության օրենք (http://kodeksy-by.com/zakon_rb_ob_ispolnitel_nom_proizvodstve.htm: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ),
11. Ուկրաինայի «Կատարողական վարույթի մասին» օրենք (http://base.spinform.ru/show_doc.fwx?rgn=86789: 2017թ. հուլիսի 8-ի դրությամբ)

Բ) Տեսական գրականություն

1. Арбитражный процесс: Учебник // Отв. ред. проф. В.В. Ярков. 3-е изд., перераб. и доп. М.: Волтерс Клувер, 2006.
2. Валеев Д.Х. Исполнительное производство: Учебник для вузов. СПб: Питер, 2008
3. Горбунова Я.П. Исполнительное производство как институт административного права: проблемы организации, практической реализации и перспективы правового регулирования: Автореф. дис. ...к.ю.н. Воронеж, 2007
4. Грицай О.В. Принципы современного исполнительного производства. Арбитражный и гражданский процесс, 2002. N6
5. Делтчев А.А. Принципы исполнительного права по Проекту Исполнительного кодекса РФ // Исполнительное право. 2005. N1.
6. Исаенкова О.В. Исполнительное право в Российской Федерации: особенности становления и перспективы развития / под ред. д.ю.н., проф. А.А. Демичева. М.: Юрлитинформ, 2007
7. Кузнецов В.Ф. Система исполнительного производства: Монография / Челяб. гос. ун-т. Челябинск, 2001
8. Малюшин К.А. Принципы гражданского исполнительного права: теоретические проблемы понятия и системы. Диссертация на соискание учебной степени кандидата юридических наук. Екатеринбург, 2010.
9. Обращение взыскания на имущество коммерческих организаций. Учебно-практический курс. СПб: Издательский дом СПбГУ, издательство юридического факультета СПбГУ, 2006.
10. Панкратова Н.А. К вопросу о принципах исполнительного права //. Система гражданской юрисдикции в канун XXI века: современное состояние и перспективы развития. Межвуз. Сборник научных Трудов. Екатеринбург, 2000.
11. Улетова Г.Д. К вопросу о системе принципов исполнительного права // Проблемы защиты прав и законных интересов граждан и организаций: Материалы Международной научно-практической конференции. Краснодар-Сочи, 23 мая 2002г. раснодар: Кубанский государственный ун-т, 2002.
12. Юков М. К. Теоретические проблемы системы гражданского процессуального права, дис. ... д.ю.н. Свердловск, 1982

Роберт Казарян
Соискатель Государственной академии
управления Республики Армения

РЕЗЮМЕ

Принципы исполнительного права

В статье представлены теоретические и практические толкования, связанные с раскрытием сути принципов принудительного исполнения. В частности, предметом рассмотрения стали национальные и международные принципы исполнительного права. Раскрыты также их место и значение в правовой системе.

Ключевые слова: *принудительное исполнение судебных актов, исполнительное производство, принцип исполнительного права, международные принципы исполнительного права, национальные принципы исполнительного права, система принципов исполнительного права.*

Robert Ghazaryan
Applicant of the Public Administration
Academy of the Republic of Armenia

SUMMARY

Principles of the enforcement law

The article examines the theoretical and practical comments to the disclosure of principles of compulsory enforcement measures' bases. In particular, the subject of the discussion is the national and international principles of the enforcement procedure. Their place and importance in the legal system is revealed.

Keywords: *compulsory enforcement of judicial acts, enforcement proceedings, principles of the enforcement law, international principles of the enforcement procedure, national principles of the enforcement procedure, system of principles of executive law.*